

ՀԱՆԳԻՍ

ԳԵՐ. Տ. ՌՈՒԲԷՆ ԱՐՔԵՊՈ. ՄԱՆՍՈՒԵԱՆԻ



10 Յուլիս, Կիրակի զիշերուան ժամը 2.30ին, իր յաւիտենական հանգիստը մտաւ Ս. էջմիածնայ Մայր Աթոռոյ Միաբան Գեր. Տ. Ռուբէն Սրբեաս. Մանասեան, որ վերջին չորս տարիներուն, հիւրաբար կը զտնուէր Ս. Աթոռ :

Հանգուցեալ Սրբազնի մահը, հակառակ եօթանասունը անցնող իր յառաջացեալ տարիքին, անակնկալի բերաւ Ս. Յակոբեանց Միաբանութիւնը, վասնզի նորին Սրբազնութիւնը տակաւին առողջ էր եւ որեւէ հիւրանդութեան նշան ցոյց չէր տար :

Գեր. Տ. Ռուբէն Սրբեաս. Մանասեան ծնած է Երեւան 1882ին, նախ նական կրթութիւնը ստացած է Երեւանի ծխական վարժարանին մէջ, ապա աշակերտած է Ս. էջմիածնի Գէորգեան ձեմարանին : Շրջանաւարտ ըլլալէ ետք, մասնաւոր հակում ցոյց տուած է Երաժշտութեան հանդէպ : Ձեմարանի Տեսչութիւնը ուզելով գնահատել իր յառաջդիմելու նիզը, զրկած է զինք Մոսկուայի Երաժշտանոցի եռամեայ դասընթացքին, զոր աւարտած է յաջողութեամբ : Իր ուսանողութեան շրջանին իսկ կազմակերպած է երգչախումբ մը, Մոսկուայի Լազարեան ձեմարանին մէջ :

1911ին Գէորգ Ե. Կաթողիկոսի ծննդամբ ծննդապրուած է կուսակրօն քահանայ : Այսուհետեւ իր վարդապետութեան զքանին վարած է պատրասխանատու պաշտօններ :

Հանգուցեալ 8. Խուըէն Սրբապս. նշանակուած է Հիւսիսային Կովկասի Սռաաշնորդ. ապա Գիրագոյն Հոգմուոր Խորհուրդի անդամ ու վարած է զանազան պաշտօններ իշմիածնի մէջ :

Որպէս Կաթողիկոսական Լիազօր Նուիրակ, զրկուած է Մահուերիա և Հեռաւոր Սրբւելք, ինչպէս նաև Սիափերիա, կարգ մը վէճնը կարգադրելու և Ս. Էջմիածնի ի նպաստ հանգանակութիւն կատարելու:

Հանգուցեալ Սրբազնը իրեն վստահուած քոլոր գործերն ալ կատարած է մասնաւոր ձեռնիհասութեամբ, Կորովով եւ յաջողութեամբ:

1928 ին ծեռնադրուած է Նպիսկոպոս, Ն. Ս. Օծութիւն Կէորդ Ե.
Կաթողիկոսի ծեռամբ : 1929 ին որպէս Առաջնորդ կը զրկուի Իրաք (Պաղ-
տատ), ուր կը մնայ մինչև 1944 : Գեր. Տ. Եփրեմ Տոնմունի Սրբազնի
վախճանուումէն ետք, կարծ շրջանի մը համար կը վարէ Դամասկոսի Կա-
թողիկոսական Փոխանորդի պաշտօնը եւ դարձեալ կը վերադառնայ Պաղ-
տատ, անպաշտու կերպով : 1951 ին եկաւ Երուսալէմ, հիւրաբար, եւ մնաց
Ս. Յակոբեանց Միաբանութեան մէջ հարազատ Միաբանի մը պէս : Ս. Յա-
կոբեանց Մայրավանքի մէջ իր քառամեայ բնակութեան ընթացքին, Նորին
Սրբազնութիւնը աշխատեցաւ իր կարողութեան սահմանին մէջ : Երբեմն
կը նախագահէր եկեղեցական թափօններու, արարողութեանց եւ հանդի-
սութիւններու : Երջան մը կազմակերպեց նաև քառաձայն Պատարագի
երգչախումբ մը, եւ այս չորս տարուան ընթացքին կարելին ըրաւ որեւէ
ծեռու օգտակար բլլալու Առաքելական մեր Ս. Աթոռին :

Հանգուցեալ Սրբազնին հոգույն համար 11 Յուլիս, օրվուշաբեր և առաւօտ Ս. Յակոբիանց Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ որու Ընթացքին կատարուեցաւ վերջին օծման կարգը։ Պատարագեց Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքահամեան, իսկ Գեր. Տ. Սուրեն Եպիսկոպոս։ Քէմիհանեան կատարեց վերջին օծումը եւ խօսեցաւ դամբանական քարոզ մը, վեր հանելով հանգուցեալ Սրբազնին արժանիքները։ Ներկայ Էր բովանդակ Միաբանութիւնն ու բարեպաշտ ժողովուրդի խուռն բազմութիւն մը։ Ս. Պատարագի աւարտին կատարուեցաւ թաղման կարգը, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրեն Արքազունին։ Մայր Տաճարէն մինչիւ իր հանգստեան վայրը՝ հինգ տեղ կատարուեցաւ բահանայաթ աղի արարողութիւնը։

«Միոն» այս տխուր առիթով, յանուն Ս. Յակոբասց օքտական թեան եւ անոր պիտին, Գեր. Տ. Եղիշ Արքեպատ. Տէրտչեանին, կը վշտակցի Ս. Էջմիածնաց Միաբանութեան, Հանգուցեալ Արքազանի անդառնալի Կո- Ս. Էջմիածնաց Միաբանութեան, Հանգուցեալ Արքազանի անդառնալի Կո- Ս. Էջմիածնաց Միաբանութեան, Հանգուցեալ Արքազանի անդառնալի Կո- Ս. Էջմիածնաց Միաբանութեան, Հանգուցեալ Արքազանի անդառնալի Կո-

Ա. Եկեղեցին : Խունկ և աղօթք իր յիշատակին .